ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ. ԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊՐ. ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և անձամբ Մեր անունից ջերմորեն ողջունում ենք Ձեզ 1958 թվականի նոր տարվա առթիվ: Ցանկանում ենք Ձեզ Դերազանցության քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի բարօրություն մեր երկրի և ի խաղաղություն ամբողջ աշխարհի: Թող է՛լ ավելի ծաղկի և հզորանա մեր մեծ, անպարտելի Հայրենիքը՝ նորանոր հաջողություններով: Ամենակարողն Աստված թող օրհնի և պահպանի խաղաղության ու բարեկեցության մեջ՝ սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքը:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊՐ. ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել մեր ջերմագին շնորհավորանքները նոր տարվա առթիվ: Ի սրտե մաղթում ենք Ձեզ և մեր Կառավարության բոլոր անդամներին քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն: Հանապազ աղոթող ենք առ Աստված՝ Մայր Հայրենիքի ու մեր հարազատ ժողովրդի բարօրության և նորանոր հաջողությունների համար ընդհանուր խաղաղության պայմաններում:

Ողջունիվ և օրհնությամբ՝
Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՋՈՒԲԻՆԻՋԵԻՆ (ԹԲԻԼԻՍԻ), ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԻԲՐԱՀԻՄՈՎԻՆ (ԲԱՔՈՒ):

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն բոլոր ասպարեզներում, իսկ եղբայրական Ձեր ժողովրդին՝ բարօրություն ու նոր հաջողություններ գալիք նոր տարում, ընդհանուր խաղաղության պայմաններում:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նոր տարվա առթիվ ընդունեցեք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները՝ Ձեր քաջառողջության և գործոց հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ի սրտե շնորհավորում ենք Ձեր և խորհրդի բոլոր անդամների նոր տարին ջերմագին բարեմաղթություններով: Թող նոր տարին բերի մեր երկրին տևական խաղաղություն ու նոր հաջողություններ՝ ի բարօրություն հայ ժողովրդի և սովետական բոլոր ժողովուրդների:

Ողջունիվ և օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ՇԱԼՈՒՏԱՇՎԻԼՈՒՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ՄԱՄԵԴՈՎԻՆ (*ԲԱՔՈՒ*),
ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԿՈՄԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ԲԱՅԿՈՎԻՆ (*ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ*):

Նոր տարվա առթիվ ընդունեցեք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները՝ Ձեր քաջառողջության և գործոց հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նոր տարվա առթիվ շնորհավորանքների, մեր Հայրենիքի հետագա բարգավաճման, ժողովրդի բարօրության և խաղաղության Ձեր ջերմ բարեմաղթությունների առթիվ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Հաճեցեք ընդունել մեր ջերմ շնորհավորությունները և Ձեր քաջառողջության ու հայրենասիրական գործունեության համար մեր լավագույն ցանկությունները:

ՔՈՉԻՆՑԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Շնորհակալություն Ձեր նոր տարվա շնորհավորական հեռագրի համար: Իմ կողմից շնորհավորում եմ Ձեր նոր տարին և ցանկանում առողջություն և բարօրություն:

ՊՈՒԶԻՆ
ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամները և անձամբ ես մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար: Հաճեցեք խնդրեմ ընդունել նաև մեր փոխադարձ ջերմ շնորհավորանքները:

Ի սրտե ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար կյանք: Թող նոր տարին լինի խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Ձեր հայրենասիրական գործունեության մեջ նորանոր հաջողությունների լավագույն ցանկություններով,

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել իմ անկեղծ շնորհավորանքը նոր՝ 1958 տարվա առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն: Շնորհակալ եմ Ձեր շնորհավորանքի համար:

Դ. ՇԱԼՈՒՏԱՇՎԻԼԻ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ

ԹԲԻԼԻՍԻ

Շնորհակալություն Ձեր շնորհավորական հեռագրի համար: Շնորհավոր և Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հաջողություն ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղության ամրապնդման գործում:

ՄԱՄԵԴՈՎ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ

ԲԱՔՈՒ